ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՍ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԿՈՒՐՍՂԵԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ « Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ –ի «Կուսդեկական խորհրդի» կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ <<ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ի ԿՈՒՐՍՂԵԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ղեկավարվելով **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ « Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ –ի կուսղեկական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա.Թ. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ ԱՊՔ մանկավարժական խորհրդի 2018թ. հունվարի 8-ի N 4 նիստում ՀՀ ԿԳՆ ԱՊՔ մանկավարժական խորհրդի նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կուսղեկական խորհրդի

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ**) կուսղեկական խորհրդի (այսուհետ՝ կուսղեկական խորհրդի) կարգավիճակը, իրավասությունը, տնօրինական խորհրդի նիստերի նախապատրաստման և անցկացման ընթացակարգը:
2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են մանկավարժական խորհրդի կողմից:

II. Կուսղեկական խորհրդի իրավասությունը

3. Կուրսղեկական խորհուրդը տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է տնօրենի հրամանով:
4. Կուրսղեկական խորհուրդը, **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** տնօրենին կանոնադրությամբ վերապահված իրավասության շրջանակներում, քննարկում է **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** դաստիարակչական աշխատանքների գործունեության հարցեր:

III. Կուրսղեկական խորհրդի կազմը

5. Կուրսղեկական խորհրդի կազմի մեջ մտնում են կուրսղեկները որակի պատասխանատուն, պրակտիկայի բաժնի վարիչը, ամբիոնի վարիչները, գրադարանի վարիչը, կարիերայի պատասխանատուն, կուրսղեկները:

IV. Կուրսղեկական խորհրդի աշխատակարգը

6. Կուրսղեկական խորհրդի նիստերը նախագահում է տնօրենը:
7. Տնօրենը, բացելով կուսղեկական խորհրդի նիստը, հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը,
8. Կուրսղեկական խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

V. Կուրսղեկական խորհրդի որոշումները

9. Կուրսղեկական խորհրդի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել տնօրենի կողմից կատարվող որոշումների հիմքում:

VI. Կուրսղեկական խորհրդի նիստի արձանագրությունը

10. Կուրսղեկական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է քարտուղարը:
11. Նիստերի արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման ամսաթիվը, նիստերին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:
12. Կուրսղեկական խորհրդի նիստի արձանագրությունները ստորագրում է դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Դաստ. աշխ.ի գծով փոխտնօրեն՝ Ա. Ղ. Հակոբյան